ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 2/5-2-564 « 14 » 02 2017թ.

Ձեր

ՀՀ կրթության և գիտության նախարար
պարոն Լևոն Մկրտչյանին

Հարգելի պարոն Մկրտչյան

Ի պատասխան Ձեր 06.02.2017թ. թիվ 01/12-1/1386-17 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից կազմակերպվել է Երևան քաղաքի Զաքարյա Սարկավագի 14 հասցեում գտնվող չինարենի խորացված ուսուցմամբ դպրոցի կառուցման շինարարական տարածքի ուսումնասիրությունը:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 15057.41 քմ: Տարածքը մասամբ ցանկապատված է, մասամբ պարսպապատված: Շինարարական տեխնիկայի և ավտոմեքենաների համար գործում են 2 դարպասներ:

Նշված տարածքում շինարարական միջոցների պահպանության համար անհրաժեշտ կլինի ձևավորել 3 պահակետ՝ շուրջօրյա ծառայություն իրականացնելու համար:

Դպրոցի կառուցման շինարարական տարածքի պահպանության և անվտանգության ապահովումը «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով

20 5698-17 02/17

պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարների գումարների օգտագործման ուղղությունները 2005թ. տարեկան ծախսերի նախահաշվի ձևով հաստատելու, նախահաշվի կատարման հետ կապված առանձին հարցեր կանոնակարգելու և ծախսերի նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 11-76-Ա որոշման 2-րդ հավելվածով սահմանված նորմատիվին համապատասխան՝ 3/24 ժամյա պահակետերով, կրտսեր խմբի ծառայողներով իրականացնելու դեպքում տարեկան ծախսը 1 պահակետի համար կազմելու է 12.958.728 դրամ, իսկ 3 պահակետի համար՝ 38.876.184 դրամ:

Հարգանքով՝

ոստիկանության գեներալ-գնդապետ **Վլադիմիր Գասպարյան**

Կատարող՝ Ա. Սիմոնյան
/հեռ: 010 59-65-01/